ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 4

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Փամբակ 04 հուլիս, 2025թ. ժամը՝ 14.00

Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի թիվ 4 նիստին մասնակցում են՝

Նախագահի տեղակալ՝ Ս. Անանյան

Քարտուղար՝ Ն. Ժամհարյան

Անդամներ՝ Ս. Հակոբյան

Կ. Շերմազանյան

Գ. Կարապետյան

Շ. Հակոբյան

Նիստին մասնակցում է Հանձնաժողովի 6 անդամ:

Նիստն ընթանում է Հանձնաժողովի նախագահ Ս. Ուլիխանյանի /ամենամյա արձակուրդ/, հանձնաժողովի անդամներ Ռ. Մինասյանի /ամենամյա արձակուրդ/, Ա. Սարգսյանի /հարգելի/, Ա. Ռամազյանի /հարգելի/, Ա. Օհանյանի /ծննդաբերական արձակուրդ/ բացակայությամբ:

Համաձայն 18 հունիսի 2025 թվականին տրված անշարժ գույքի հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի, մինչև 2025 թվականը չվճարված ապառքներ չկան:

Մարտի 6-ին արտերկրում մերկասառույցի վրա վայր ընկնելու հետևանքով կոտրել է ստորին ձախ վերջույթը: Կոտրվածքները եղել են 4-ը, ինչի արդյունքում վիրահատվել է: Որդին՝ Սամվել Եղիազարյանը, վրաերթի է ենթարկվել, ինչի հետևանքով հեռացրել են փայծաղը, ինչպես նաև ունի ծնկի կոտրվածք:

Ընտանիքի բնակելի տան տանիքը ուժգին քամիների հետևանքով վնասվել է: Նախքան վնասվածք ստանալը ընտանիքի հայրը իր ուժերով վերանորոգել է մի մասը, սակայն թե ֆինանսական միջոցների բացակայության, թե առողջական վիճակից ելնելով աշխատանքները մնացել են կիսատ:

Սամվել և Անուշ Եղիազարյանները սովորում են Վանաձորի պետական համալսարանում՝ առկա վճարովի համակարգում:

Նաիրա Բալայանն աշխատում է կարի ֆաբրիկայում, ընտանիքի հիմնական եկամուտը վերջինիս 120.000 դրամ աշխատավարձն է, որը չի բավականեցնում թե ուսման վարձի, թե առօրյա հոգսերը հոգալու, ինչպես նաև տանիքի ծածկի մնացած հատվածը վերանորոգելու համար, ուստի դիմումատուն խնդրում է սոցիալական աջակցություն՝ շինանյութի տեսքով:

Համաձայն 2025 թվականի հունիսի 23-ին կատարված կարիքի գնահատման արդյունքների, ընտանիքի զբաղեցրած տունը չորս սենյականոց է՝ վերանորոգված: Կահույքը նոր է, տունը գտնվում է մաքուր վիճակում: Հյուրասենյակում առկա է սպասքի պահարան, հեռուստացույց, սեղան, աթոռներ: Ննջասենյակում առկա է մահճակալ, զգեստապահարան: Առկա է խոհանոց: Մաքուր է և կոկիկ:

Կոմունալ-կենցաղային հարմարություններ և սանիտարահիգիենիկ պայմանները բավարար է: Գազաֆիկացված է, առկա է էլեկտրաէներգիա, ջրամատակարարում: Լոգարանը, սանհանգույցը գտնվում է տան ներսում:

Ընտանիքը կարիքների գնահատման արդյունքում հատել է սոցիալական աջակցությունների տրամադրման նվազագույն շեմը՝ հավաքելով 5 միավոր:

Դիմումատուն նշում է, որ նշված հասցեում բնակվում է մոր և որդու հետ: Բնակվում են բարեկամի տանը: Վերջիններս՝ գտնվելով արտերկրում, բնակարանը հանձնել են իրենց՝ բնակվելու նպատակով, սակայն օրերս հայտնել են, որ վերադառնում են: Ընտանիքը ստիպված է տեղափոխվել փայտյա տնակ, սակայն տնակը գտնվում է շատ վատ վիճակում ՝ պատուհաններ չկան, տանիքը վնասված է: Դիմումատուն և իր մայրը գտնվում են առողջապես ծանր վիճակում, օգտագործում են դեղորայք: Սուսաննա Գրիգորյանը տարել է վիրահատություն, հեռացվել է ՝ լեղապարկը: Ընտանիքին տեղափոխվելու համար անհրաժեշտ է վերանորոգել տնակի պատուհանները և անել կոսմետիկ հարդարում, որի ընդհանուր ծախսը կազմում է 260.000 դրամ:

Փաստաթղթային փաթեթի ուսումնասիրության ավարտին Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց կարիքի գնահատման արդյունքները և ընտանիքի սոցիալական պատմությունը:

Ընտանիքի հիմնական եկամուտը կենսաթոշակն ու տղայի աշխատավարձն է, որը չի բավականեցնում թե դեղորայքի ձեռքբերման, թե առօրյա հոգսերը հոգալու համար, ուստի դիմումատուն խնդրում է սոցիալական աջակցություն՝ շինանյութի տեսքով:

Փամբակի համայնքապետարանը՝ նպատակ ունենալով բարելավել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող Սուսաննա Գրիգորյանի և իր ընտանիքի կենսապայմանները, համագործակցություն է սկսել «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի հետ, որը պատրաստակամություն է հայտնել ընտանիքին տրամադրել 160.000 դրամ փոխառություն՝ պատուհանների գնման համար:

Համաձայն 2025 թվականի հուլիսի 1-ին կատարված կարիքի գնահատման արդյունքների, ընտանիքի զբաղեցրած տնակը 2 սենյականոց է՝ խարխուլ վիճակում: Խոնավ է, ջեռուցվում է փայտի վառարանով: Կահույքը հին է, սակայն գտնվում է բարվոք վիճակում, ենթակա է շահագործման: Հյուրասենյակում առկա է սպասքի պահարան, հեռուստացույց, սեղան, աթոռներ: Ննջասենյակում առկա է մահճակալ,

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Սերգո Սամվելի Եղիազարյանի** պահանջը սոցիալական աջակցության մասին բավարարել և տրամադրել սոցիալական աջակցություն՝ ընդհանուր **42.000 դրամ** արժողությամբ շինանյութի տեսքով:
2. **Սուսան Մեհրդատի Գրիգորյանի** պահանջը սոցիալական աջակցության մասին բավարարել և տրամադրել սոցիալական աջակցություն՝ ընդհանուր **100.000 դրամ** արժողությամբ շինանյութի տեսքով:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ս. Անանյան

Քարտուղար՝ Ն. Ժամհարյան

Անդամներ՝ Գ. Կարապետյան

Ս. Հակոբյան

Կ. Շերմազանյան

Շ. Հակոբյան